

ՀԱՅԿԱՆՈՒՇ ՄԵՍՐՈՊՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվ. լեզվի ինստիտուտ
բանասիրական գիտությունների դոկտոր

haykanushm@mail.ru

«ԲԱՐԵԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ» ՀԱՍԿԱՑՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԵՐԵՆԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐՈՒՄ

Բանալի բառեր¹ հայերեն, տարածքային տարբերակ, բարբառ, բարեգործություն, տուրք:

Հայկազյան¹ նաև Ստ. Մալխասյանցի² բառարաններում *բարեգործ* և *բարեգործություն* հասկացությունները բնորոշվում են *երախտագործ, մարդասեր և հասարակօգուտ գործ, մարդասիրական գործ* բառանուններով, իսկ հոմանիշների բառարանը³ թվարկում է *բարերարություն, երախտագործություն, երախտավորություն, երախտարարություն, վարձք* հոմանիշները: Ինչպես նկատում ենք, նշված հասկացությունների հիմքում ընկած է կամավոր տուրքի գաղափարը, իսկ կամավոր ամեն ինչ սրտաբուխ է և չունի սահմանված որևէ չափ և ժամանակամիջոց:

Հայերենի տարածքային տարբերակներում բարեգործությանը վերաբերող բառապաշարը բավականին հարուստ է: Ի մի բերված բարբառային բառերն ու արտահայտությունները կարելի է ներկայացնել մի քանի հիմնական խմբերով:

¹ Տե՛ս Նոր բառգիրք Հայկազյան լեզուի, էջ 445–446:

² Տե՛ս Մալխասեանց Ստ., Հայերէն բացատրական բառարան, էջ 337:

³ Տե՛ս Սուքիասյան Ա., Հայոց լեզվի հոմանիշների բառարան, էջ 115:

ա) **Կրոնական հավատալիքով կամ նախապաշարումներով պայմանավորված բարեգործություն հատկանշող լեզվական միավորներ:** Ըստ հավատալիքի՝ Աստված է առաջին երախտագործն ու մարդասերը: Բարեգործական առաջին վկայություն է համարվում *սաբեկյան ոչխարը*, որը, ըստ Հին Կտակարանի, Աստված տվեց Աբրահամին՝ Իսահակի փոխարեն զոհաբերելու համար (Ծննդոց. 22.12): Իս. Աբովյանը՝ որպես Արարատյան բարբառի Քանաքեռի խոսվածքի կրող, *սաբեկյան ոչխար*⁴ բառակապակցությունը գործածում է փոխաբերաբար՝ «աստվածային պարգև» իմաստով: Բենսեն նույն իմաստով նշում է Բուլանուխի խոսվածքի *դային* անունով բարեգործության տեսակը⁵: Քրդերեն *daîn* բառը նշանակում է «տրված, պարգև, շնորհ» (օրինակ՝ «Դայըն դայըն է խուդէյե»՝ «ընծան, շնորհքը աստծուց է»): Մշեցիները, բուլանըխցիները և այլք այդ պարգևը անվանում են *տըվածուրիկ*՝ «նվիրական, երկնատուր» իմաստով:

Աստծո շնչի բարեհաճությամբ և շնորհով գրված Աստվածաշունչ մատյանում աստվածային պարգևի բազմաթիվ վկայություններ կան: Մարդ արարածն էլ իր հերթին, ի տրիտուր աստվածային արարչագործության, կատարում է բարեգործություն, որի նախօրինակներից են սրբարանի՝ Տիրոջ վրանի, ուխտի տապանակի, հացի, խնկարկության, պղնձե սեղանների, աշտանակի, բակի շինությունների համար կատարվող աշխատանքները և նվիրատվությունները (Ելից. 35–4–29): Ըստ Աստվածաշնչի՝ Տերը սիրում է հոժարակամ նվիրատվություններ անողներին, առատորեն օրհնում ու վարձատրում է նրանց և, որպես կամավոր տուրքի լավագույն օրինակ,

⁴ Բարբառային օրինակներն ըստ բարբառագիտական մենագրությունների, բարբառային բառարանների, ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի ձեռագիր նյութերի, ինչպես նաև բարբառախոս վայրերում մեր կատարած հարցումների:

⁵ Տե՛ս **Բենսեն**, *Բուլանուխի խոսվածքի բառարան* (ձեռագիր):

վկայում է այրի կնոջ երկու լուման (Մարկ., ԺԲ, 41–44): «Նոյն իսկ տառապեալ այրիի օրինակով Յիսուսը ցանկանում է մատնանիշ անել, որ Ամենաբարձրեալը նայում է ոչ զոհաբերութեան, այլ սրտերին»⁶:

Բարբառախոս հանրության կապը Աստծու հետ տեղի է ունենում եկեղեցու և հոգևոր դասի միջոցով, որով էլ պայմանավորվում է հոգևոր տուրք և բարեգործությունն նշող բառերի և արտահայտությունների առաջացումը:

Հանուն եկեղեցու պայծառության կատարվող բարեգործությունն նշում *հիշատակիք* Արարատյան, Սիսիան // *հիշելիք*, Շիրակ // *հիշելք* // *հիշէք*, Կեսարիա «եկեղեցուն հիշատակ տրված զգեստ, անոթներ, աման, գդալ և այլն, որոնք տանում, գործածում են ննջեցեալ կամ հարսանիք ունեցողները, որի համար վարձահատույց են լինում»⁷, *լուսագին* // *լուսգին*, Պոլիս, Իսարբերդ, Սեբաստիա, Ղարաբաղ և այլն, «իբրև լուսավորության՝ ձեթի, մոմի գին եկեղեցուն տրված դրամ կամ այլ նվեր» և այլն:

Բարբառագետ Ս. Անթոսյանը կարծում է, որ *Մաշտոց*, *Ճաշոց* ծիսական գրքերի անունների համաբանությամբ Կեսարիայի բարբառում կազմվել է *ժամոց*, Պոլսում, Բեյլանում, Լեհահայոց բարբառում, Նոր Նախիջևանում, Ախալքալաքում՝ *ժամուց* հարանունը՝ «ծիսակատարության համար քահանային իբրև վարձ տրվող գումար» իմաստով: Արարատյան տարածքում *ժամուց* հնչատարբերակին հոմանիշ է Կարնո բարբառին և Քանաքեռի խոսվածքին բնորոշ *պաշտումեց* բառը:

⁶ **Խորեն քահանայ Խանզադեանց**, *Այրիի եւ նրա կատարեալ տուրքի մասին*, «Արարատ», 1892, էջ 501:

⁷ Տե՛ս «Ազգագրական հանդես», Երրորդ տարի, Գ զիւրք, Թիֆլիս, 1898, N 1–2, էջ 248:

Եկեղեցու սրբությունները, խաչը, հոգևորականի աջը համբուրելու համար քահանային տրվող կամ գանձանակի մեջ գցվող դրամը Արարատյան և Մուշի բարբառներում նշում են *խաչհամբույր* // *խէչհամբուր*, *աջհամբույր* գրական փոխառություններով, Կարճևանի և Կաքավաբերդի խոսվածքներում՝ *խըչամբուր* քմայնացված հնչատարբերակով, Վանում՝ *խաչօխնէք* կամ *խաչխամբուր* բաղադրյալ կազմություններով, իսկ այդ նպատակով դրամները առատորեն բաշխելու գործողությունը՝ *խաչխամբուր սըռսըռալ* հարադիր բայով:

Հայաստանի բազմաթիվ տարածքներում բարեգործության այս տեսակը պարունակողի և պարունակչալի իմաստափոխության համաբանությամբ պարզապես կոչվում է *գանձանակ*, Արարատյան, Լոռի, Ղազախ, Մեղրի, Մուշ // *գ'անձանակ*, Նոր Զուղա // *գանձանագ*, Պոլիս // *գ'անձանակ*, Ոզմ // *կանցանաղ*, Համշեն // *կանձանակ*, Շամախի // *կ'անձանակ*, Մոկս // *կ'անձանակ*, Շատախ // *կանձանըգ*, Սվեդիա // *քանձանակ*, Վան // *քանցանակ*, Բուրդուր // *քանցանագ*, Կեսարիա // *քանզանագ*, Մալաթիա // *քանցանաիգ*, Տիգրանակերտ և այլն:

Մասնավոր բարեգործության տեսակ են հատկանշում՝ *հոգեբաժին*, Արարատյան, Վան կամ *հոգվո բաժին*, Մուշ, Բուլանուխ, Չենկիլեր, *ուրփուց* (=որբոց), Ադանա՝ «ննջեցյալի հոգու համար քահանային կամ մայրավանքին հատկացվող կամավոր տուրք», Զեյթուն՝ «հարսանիքի համար մորթված տավարից քահանային տրվող բաժինը», *վարձ* // *թաղումելեք* // *թաղողչեք*, Քանաքեռ՝ «քահանային տրվող թաղման վարձ», *գերեզմանօրհնելչեք*, Լեհահայք // *գերեզմանօրհնեք*, Ղարաբաղ, Ախալքալաք, *տանօրհնելչեք*, Լեհահայք, *կընքըղըրէմ*, Մեղրի «մկրտելու վարձ», *խոստիկ*, Վան «սրբերին խոստացված ոչխար կամ դրամ», *խըչհանէք*, Գորիս

«ջրօրհներքին խաչը ջրից հանելու արտոնություն ստանալու համար տրվող նվեր», *դռնբացէք*, Արարատյան «ծաղկազարդի երեկոյան եկեղեցու վարագույրը, նախկինում՝ դուռը բացելու արտոնություն ստանալու նվեր», *ծաղկամէր*, Երևան «խաչաձև փնջած ծաղիկ, որը Համբարձման տոնին նվիրում են եկեղեցուն», *խաչափունջ*, Երևան // *խաչփունջ*, Աշտարակ «արտը քաղելուց հետո եկեղեցուն նվիրվող խաչաձև փնջած հասկ» և այլն:

բ) **Տուրք հատկանշող բառանուններ:** Բացի կամավոր նվիրատվություններից, եկեղեցուն վճարվում են սահմանված որոշ տուրքեր, որոնք ևս բարեգործական նպատակներով են կիրառվում: Սրբավայրերի համար տուրք ու նվեր հանգանակելը Արարատյան, Մուշի և այլ բարբառներում կոչվում է *ժողովարարություն*, իսկ հավաքը կազմակերպող սպասավորները՝ *ժողովարար* կամ *ժողովբարար*:

Մանուել Կ. Միրախորյանը «Նկարագրական ուղեւորութիւն ի հայաբնակ գաւառս Արեւելեան Տաճկաստանի, Տեղագրութիւնք սարէն եւ ձորէն, հնէն եւ նորէն, Պիտանի գիտնոց»⁸ աշխատության մեջ հանգամանորեն ներկայացնում է նշված վայրերում ընդունված վանական տուրքերի տեսակները: Դրանցից մեկը *զուպարա*⁹ կոչվող պարտադիր աշխատանքն էր: Այդ մասին հեղինակը գրում է. «Իւրաքանչիւր տուն, թէ՛ աղքատ լինի և թէ՛ հարուստ, տարուան հնձոց ժամանակը, մէկ օր մարդ մը տալ պարտի վանուց արտերն

⁸ Տե՛ս **Մանուել Կ. Միրախորեան**, *Նկարագրական ուղեւորութիւն ի հայաբնակ գաւառս Արեւելեան Տաճկաստանի*, Տեղագրութիւնք սարէն եւ ձորէն, հնէն եւ նորէն, Պիտանի գիտնոց, «Վանական տուրք», Գլ. ԽԱ., տպագրութիւն Մ.Կ. Սարգսի (ի տպարանի Դիմաքսեան), տեղագրեց Կ. Պօլիս, 1884, էջ 213:

⁹ Ծան. Կարնո բարբառի Ծիրակի խոսածքում գրի ենք առել *զուբբա* հնչատարբերակը՝ «շատ ընտիր» իմաստով:

քաղելոյ համար. ոմանք դրամ կը տան փոխանակ մարդոյ»: «Կանայք ևս կը գան վանուց գարիներն քաղել ի պահանջել հարկին»¹⁰:

Աստված Մովսեսին տված քարե տախտակների միջոցով պատվիրում է. «Քո երկրի առաջին բերքը կը տանես քո Տէր Աստծու տունը» (Ելից. 34.26): Համաձայն այս պատվիրանի է հաստատված տասանորդը, որը վանեցիներն անվանում են *ուշուր*, իսկ պտուղ հավաքող կրոնավորին կեսարացիները և մշեցիները կոչում են *նըվիրագ*, սասունցիներն ու բուլանըխցիները՝ *նըվիրակ*:

Հայերենի բարբառներում տուրքը բնորոշվում է մի շարք հոմանիշներով. այսպես՝ *ախլավ*, Վան, Կարին «առաջին կալից տրվող տուրք» («*Ախլավին ցորենը, Աստված օխնի, Աստծուն* (իմա՝ եկեղեցուն, վանքին), *վորպէվէրուն, եթըմին*»), *պըտղի*, Վան // *բըտղի*, Սասուն «արմտիքի և կաթնեղենի տուրք», *գավազանապտուղ*, Բուլանուխ, Վան «հոգևորականներին տրվող տուրք», *դ'արբաս*, Բուլանուխ «վանքի դարպասները բանալու տուրք», *կալամաս* Երևան // *կալմաս*, Նոր Նախիջևան // *կալեմաստ*, Վան «կալապտուղ, կալից քահանային տրված բաժինը» և այլն: Խնուսում, Քղիում, Ակնի Մաշկերտում կալ անելուց հետո աղքատներին որպես ողորմություն տրվող հացահատիկը ևս կոչվում է *կալմաս*:

Խոյեցիների կամավոր նվիրատվության այս տեսակի մասին Հ. Ավչյանը փաստում է. «Այդ սովորությունը մինչեւ այժմ էլ թագաւորում է գիւղական կեանքում, որ երբ արտի տէրը բարեհաճում է հաց տանելու կամ իւր բանուորներին այցելելու, խուրձ կապող բանուորը իր կապած խրճերից (նոյնպէս անում են եւ քաղիան անող կանայք իրենց քաղիանաձ բոյսերից) մէկը վերցնում եւ իւր ուսին բարձաձ՝ տանում է, նուիրում իր տիրոջը»¹¹:

¹⁰ Նշվ. աշխ., Մասն Գ, էջ 214:

¹¹ **Յարութիւն Աւետան**, *Նիստ ու կաց խոյեցոյց*, «Արարատ», Ս. Էջմիածին, 1909, էջ 655:

Բարեգործությունը կատարվում էր նաև ոչ բացահայտ, ծածուկ, հաճախ բարեգործը ուզում է անհայտ մնալ: Ջավախքում այդպիսի բարեգործությունը հայտնի է *Օռնաու կալ*, Բուլանըխում՝ *Ըռնաուլրի կալ* անվանումներով: Ե. Լալայանը գրում է. «Վերջին դատաստանի ժամանակ Գաբրիել հրեշտակապետը պիտի փչե փողը, մարմինները յարութիւն պիտի առնեն և հագնին հոգիները» ու հավաքվեն Օռնաու կալում: «Այս կալի մասին պատմում են, թէ ժամանակով երկու եղբայր բաժանուել են: Սրանցից իւրաքանչիւրը մտածելով թէ միւսն իրենից աւելի կարիք ունի, գիշերով իւր օրանից տարել լցրել է միւսի օրնի վրայ, և այս եղբայրսիրութիւնը Քրիստոսին այնքան դուր է եկել, որ նշանակել է այդ կալը վերջին դատաստանի տեղ»¹²:

Բարերարություն էր համարվում նաև հանգուցյալի հագուստը վանքի միաբանությանը տալը, որը Բուլանըխում կոչվում էր *կողորքութ*, Ղազախում՝ *իրիցու տարած*:

գ) **Հանրության համար կատարվող բարեգործության տեսակների անվանումները:** Հանրության համար կատարվող բարեգործության նախնական տեսակներից մեկը կոչվում է *մատրաղ*: Աստծուն զոհաբերված կենդանին բաժանվում էր չքավոր հավատացյալներին, որով էլ հիմք է դրվում *մատրաղ* հասկացությանը: *Մատրաղ* գրական բառաձևն ունի լայն տարածագործառնականություն և բնորոշ է գրեթե բոլոր բարբառներին. հնչատարբերակները այդքան էլ մեծ թիվ չեն կազմում (Բեյլանի բարբառում՝ *մահոդ*): Մի շարք բարբառներում գործածվում են *մատրաղ* բառի *կուրպուն* (Քեսաբ), որից՝ *խուրբան գըդրիլ* (Տիգրանակերտ), *ախառ* (Արարատյան, Մուշ), որից՝ *ախառ անել* // *ախառ կիրակի* (Ապարան, Ախալցխա), *աքոդք* (Կեսարիա) // *աքօխք* (Ադանա, Մանիսա,

¹² Տե՛ս Լալաեան Ե., «Ազգագրական հանդէս», Ա, Ջաւախք, Թիֆլիս, 1897, էջ 206:

Մաշկերտ, Նոր Նախիջևան, Սվեդիա, Քղի) // *աքուիսք* (Ձեյթուն) // *այկօծ* (Ադաբազար) և այլ հոմանիշներ: Սեբաստիայի բարբառում *աքօիսքը* լավաշ հացով չամիչն է, որը պարկերով բերում են և բաժանում գերեզմանատանը ներկա գտնվողներին: Բարբառային բառապաշարում կան *մատաղ* բառով կազմված մի շարք բարդություններ (*մատղըցու՝* Բուլանուխ, *մադախցու՝* Երզնկա, *մըտղագին՝* Ագուլիս և այլն), բանահյուսական միավորներ (*մատաղի փող հավաքող*, *Թիֆլիս՝ մեկի հետ մատաղ չկտրել՝* Արարատյան և այլն):

Արաբկիրի տարածաշրջանում մատաղ էր կոչվում մսով, ձավարով կամ բրնձով փլավը, որը եկեղեցու բակում բաժանում էին բոլորին, իսկ Սվեդիայում՝ լյարդով ու սոխով մսեղեն կերակուրը, որ տրվում էր հարսանիքների ժամանակ, նաև բաշխվում էր աղքատներին՝ ննջեցյալների հոգու հանգստության համար: Սասունի բարբառում *ախլավա՝* // *աշկավա՝* հնչատարբերակներով հատկանշվում է առաջին բերքից թխված և որպես *մատաղ* բաժանվող հացը:

Մատաղ էր համարվում նաև ննջեցյալների հուղարկավորությանը, այգողքին, յոթնօրեքին, քառասունքին, տարելիցին և հիշատակի այլ օրերին¹³ տրվող հոգեհացը կամ աղքատաճաշը, որը Հայաստանի տարբեր շրջաններում ուներ տարբեր բաղադրություն և անվանումներ:

Հոգեհաց բարեպաշտական արարողության նախնական ձևը սիրո կամ հասարակաց ճաշն է՝ ագապը¹⁴, որի մասին Սահակ Պարթևի կանոնները պատվիրում են քահանաներին միաբան կատարել «զպաշտօն եւ զպատարագ ագապացն առանց աւետարան

¹³ **Բղոյան Վ.**, *Հայ ազգագրություն*, ԵՊՀ հրատ., Երևան, 1974, էջ 179:

¹⁴ Տե՛ս նաև՝ *Ազապի հաստատությունը հայոց մէջ*, «Արարատ», 1912, էջ 997–1001:

կարդալոյ մի իշխեսցեն մատուցեալ» կամ «...շինականները, որ յագապ հրաւիրեցան, պատարագից առաջ չպէտք է հաց ուտեն»¹⁵:

Հունարեն *agepe* «սեր» բառով¹⁶ նշվող այս ծեսը «Քրիստոնէութեան սկզբնական շրջանում հաւատացեալների համայնական ընթրիք [է]՝ ի յիշատակ խորհրդաւոր ընթրիքի, որի ժամանակ մասնակցողները համբուրում էին միմեանց՝ ի նշան հաշտութեան»¹⁷: Հետագայում «ագապիներ մատուցվել են նաև ննջեցյալների հոգու հանգստության համար»¹⁸: Ագապի սովորույթը գալիս է հեթանոսության շրջանից:

Հայերենի բարբառներում *հոգեհաց* իրողությունը նշվում է բազմաթիվ հնչատարբերակներով (30 հատ) ու զուգաձևություններով (30 հատ), նաև հոմանշային շարքերով ու բաղադրյալ կազմություններով, բառակապակցություններով: Գրական հայերենին բնորոշ *հոգեհաց* ձևն է գրանցված միայն Այնթափում և Սեբաստիայի Խուռնավուլ բնակավայրում:

Մի շարք տարածքներում այս բարդության հնչյունական տարբերակներն են գործածվում: Այսպես՝ *հօքէհաց* (Մուժումբար, Վերին Բուրվարի Դեյնով, «Գիրագմուղքին հօքէհաց դըվին», Նիկոմեդիայի Իսասկալ), *հօքէհա՛ց* (Սասունի Հոսներ), *հօկէհաց* (Խոտրջուրի Միջինթաղ, Արաբկիր, Սուրմալուի Փանիկ), *հօքըիյահաց* (Հավարիկ), *հօկէխաց* (Փերիայի Թաղիաբադ), *խօկէխաց* (Արճեշի Ծայծակ), *խօքէխաց* (Բայազետի Կարմիր գյուղ), *խօք'էխաց* (Ապարան), *խօգէհաց* և այլն:

Մի շարք վայրերում *հոգեհաց* բարդ բառին համարժեք է *հոգու հաց* բառակապակցությունը՝ համապատասխան հնչատարբերակ-

¹⁵ Թանգեան Ն.Վ. Մելիք, *Հայոց եկեղեցական իրաւունքը*, Ա, Ծուշի, 1903, էջ 539:

¹⁶ Տէնս Պապիկյան Ս., *Ագապի* տերմինի մասին, «Ջափուկյանական ընթերցումներ», Երևան, 2006, էջ 159–164:

¹⁷ Մալխասեանց Ստ., 1944, հ. 1, էջ 3:

¹⁸ «Քրիստոնյա Հայաստան» հանրագիտարան, էջ 14:

ներով (գրանցել ենք 20 հնչատարբերակ): Օրինակ, *հոգու հաց* գրական ձևն ունեն արևելյան բարբառախմբից՝ Երևանի, Նախիջևանի Աստապատ գյուղի խոսվածքը և արևմտյան տարածքից՝ Ակնի, Մանիսայի, Նոր Նախիջևանի բարբառները: Հնչյունափոխված տարբերակներից են՝ *հոքու հաց* (Օշական, Թալինի Ներքին Սասնաշեն, Ախալքալաքի Բեժանո, Բոգդանովկայի Փոգա, Փերիայի Շուրիշկան, «Հօքու հաց դըվավ մ'ոնօղին անունին», Խարբերդի Բազմաշեն), *հոկու հաց* (Օրդու, Մոտկանի Նիչ), *հոկու հաժ* (Խուրթի Շեն և Թաղավանք, Ալաշկերտի Յօնջալու և Իրիցու գյուղ, Սասունի Ընգուզնակ, Կրխու և Սաղդուն, Ճենիկ, Աբխազիայի Ալախաձե, Կարսի Քյուրագդարա), *հօքուն հաց* (Ասլանբեկ), *հոքիին համար հաց* (Նիկոմեդիայի Արմաշ), *խուկ'ու խաց* (Սպարկերտի Տոսու և Վերին Հուրուք, Ուշի), *խօքու խաց* (Արծկեի Հառեն և Արջրա, Մանազկերտի Էգնախոջա և Բադնոս, Էջմիածնի Արագած և Առատաշեն, Նախիջևանի Ուլյա և Նորաշեն, Քյազազի Գուլիզարդ, Սուրմալուի Դաշբուռուն և Ղազուկըշլաղ, Դիադինի Ջուջան, Խիզանի Խարիդ), *խուկ'ու խաց* (Մոկսի Կըճավ, Կարկառի Ծոկու), *խօկ'ու խաց* (Վանի Սխկյա և Մխկներ, Արճակի Սևան և Լիմ, Գավաշի Հարպերտ), *խուք'ու խաց* (Թիմարի Մարմետ), *խոկ'ու խա՞ց* (Շատախ, Մոկսի Մամուտանց), *խօքիին խաց* (Մարաղա), *խօկու խաց* (Արծկեի Առնջկույս և Կոճերեր, Աշտարակի Ոսկեհատ, Բիթլիսի Դերըկ, Սուրմալուի Կուլաք), *խօկ'ու խաց* (Հայոց ձորի Նոր գեղ), *խօք'ու խաց* (Խոյի Սեյրավար, Արճակի Մանդան), *խօք'ը խաց* (Խոյի Կարակըզի և Բադիլբոյ), ինչպես նաև *հոգու հաց* բառակապակցության մեկ շեշտով արտասանվող կցական գործածությունները (գրանցել ենք 13 տարբերակ). *հօքուհա'ց* (Կոշ, Առինջ, Սեբաստիայի Դենդիլ և Մանջալիկ), «*Յօթին հօքուհա'ց գուդ'աք գօր*»), *հօկուհա'ժ* (Մուշի Մկրագոմ և Վարդենիս, Բուլանուխի Կոպ, Բասե-

նի Արմտլու, Վանի Աղբակ, Համշեն, Ճանիկ, Սամսոն և Օրմոնքոյ), *հոկոուհա՛ծ* (Մուշ, Ապարանի Ղալաչի, Արագած, Ատմա), *հոկկու-հա՛ծ* (Սասունի Գոմք, Փսանքի Մըշկեդ), *խոկոնիսա՛ց* (Բիթլիս, Խիզանի Պոռշնենց, Թիմարի Դոնաշեն), *խուկ՛ոնիսա՛ց* (Մամուտանցի Սեդ), *խօքոնիսա՛ց* (Փերիայի Ծաղկալանջ) և այլն:

Հայերենի տարածքային տարբերակներում գործածվում են մի շարք նույնարմատ հոմանիշներ, որոնցում հիմնականում պահպանված են կա՛մ *հոգի*, կա՛մ *հաց* բաղադրիչները: Օրինակ՝ *մէռլըխաց*, Խոյ, *հոկուհարգ*, Շատախի Գյարմավ, *հուկկ՛ու աբույ*, Հաջըն, *հոկուխեր*, Մոտկանի Կոռ, *հոկկ՛ու ուղըլիք*, Բեյլան, *խուկ՛ուվըռը՛իկ*, Մամուտանցի Ապարանց, *խոկու խէր*, Արծկեի Աոնջկույս, Աշտարակի Ոսկեհատ, *հօքէջաշ*, Ակն, *հօքու ջաշ*, Մալաթիա, *հօքա-հա՞նգիստի հաց*, Օրդուբադի Մեսրոպավան, *ծնկնահաց // ծնկա-հաց*, Լոռի, Բորչալու, *հ՛էրէսի հաց*, Իգդիրի Հախվերիս, *յասը խաց*, Մարաղա, *խէրի խաց*, Արճեշի Կտրած քար, Սուրմալուի Մոլլադամար, *հօղվէրկի հաժ*, Սասունի Արծվիկ, *փէդըդի հաց*, Ալաշկերտի Խաստուր, *նի՛գնահաց*, Մեղրի, *խացիսա՞նա*, Սպարկերտի Տոսու և Վերին Հուրուք, *օխթն օրէնքի հաց*, Ջավախք և այլն:

Հաց բաղադրիչը պահպանվում է *մեռել* և *ժամ* բառերով կազմված բաղադրություններում: *Մեռ* արմատով կազմված *մեռելահաց* հոդակապով բարդությունն ունի բառային և բառակապակցական մոտ 30 զուգաբանություն և բնորոշ է բազմաթիվ բնակավայրերի. օրինակ՝ *մէռէլահաց*, Ղազախ, Ղարաբաղ // *մեռելիսաց*, Ալաշկերտի Յոնջալու, Անիի Սառնաղբյուր // *մէռէլիաց*, Մուժումբար, Ախալքալաքի Կարծախ // *մէռէլիաժ՞*, Սասունի Կրխու // *մէռլահաց*, Արարատյան, Եղվարդ, Շամխորի Նյուզգեր // *մեռլախաց*, Ալաշկերտի Կազի, Կարկառի Ծոկու, Աշտարակի Ագարակ // *մէռլըխաց*, Խոյից եկածներով բնակեցված Մասիսի Այնթափ // *մըռլահաց*, Դաշքեսա-

նի Բանանց, Կարմիրի Վերին Ճամբարակ, Շամխորի Մարտունի, Գորիսի Վերինշեն և Բռուն, Իջևանի Ծաղկավան, Խանլար, Շահումյանի Բուզլուխ, Կիրովաբադ // *մըռըլհաժ*, Սասունի Մառնիկ // *մըռըլահաց*, Մարտակերտի Թալիշ, «*Մըռըլահացէն հէտան յըտնաւոր չըն անէր*», Ղափանի Ներքին և Վերին Խոտանան, *մէռէլահաց*, Ապարանի Ձորագլուխ // *մըռըլա՞հաց*, Վաղուհաս // *մա՞ռէլահաց*, Խարբերդի Հաբուսի և այլն:

Մի շարք խոսվածքներին բնորոշ են բառակապակցությունները՝ *մէռլի խաց*, Կոտայքի Ակունք // *մէռլի հաց*, Քանաքեռ, Փերիայի Միլակերտ // *մառլի հաց*, Բալուի Նաջարան // *մըռի հաց*, Գորիսի Շինուհայր // *մըռըլի հաժ*, Բուլանուխի Կողակ // *մէռէլի խաց*, Բիթլիսի Քըխսամ // *մէռըլ խաց*, Այնթափ // *մէռէլօցի հաց*, Շամախու Սաղյան // *մեռլի ճաշ*, Յաճի Թիմարի Քյոչանի և այլն:

Մեծ թիվ են կազմում *պատարազ* (26 տարբերակ), նաև *ժամ* բառերով բաղադրված հոմանիշները. *պադարակ* // *պադարակ՝*, Մուշի Վարդխաղ, Խնուսի Գոպալ, Ապարանի Ձորագլուխ, Մելիքգյուղ, Արայի, Ափնա, Մուլքի, Բուլանուխի Կոպ և Շերվանշեխ, Արծափի Կոգովիտ, Մարտունու Թազագյուղ, Մադինա և Լիճք, Կարսի Նախիջևան, Մանազկերտի Ռստամ-Գեդուկ, Բասենի Վելի Բաբա, Խուրթի Թաղվու // *պադարաք*, Արարատ, Սիսիանի Ուզ և Տոլորս, Նուխի, Բայազետի Մուսուն, Վերին Բասենի Ալիճագրակ, Կարինի Դիլիֆ, Ներքին Բուլանուխի Լիզ, Աբովյանի Կամարիս, Ալաշկերտի Ուչքիլիսա, Բասենի Տաղվերան, «*Իվիլ՝ թիքյա՞ն կըլիէթ պըդա՞րա՞ք՝ տէռնա*» // *բադարաք*, ԼՂՀ Վաղուհաս, Գորիսի Քարահունջ // *բադարաք*, Մարտակերտի Սեյսուլան//*բադարա՞ք՝*, Ասկերանի Խանաբադ, Մարտունու Եմիշճան // *բ՞ադարաք*, Բեյլան, «*Հիկկիյին բ՞ադարաք էնցըցինք, ուղըլիք դըվինք*» // *բադարէք՝*, Հադրութ // *բըդարաք*, Գորիսի Խոտ, *խօկու պատարաք*, Մարտունու Մոլալու,

պատարաքի հաց, Բալահովիտ, Փերիայի Նամագերդ // պատարաքի խաց, Խոյի Գետազատ, Փերիայի Ղարղուն // բըղըրըքա՞հաց, ԼՂՀ Կոճողոտ // պադարաք խաց, Ուրմիայի Իքի-Աղաջ, մեռլի պադարաք, Ղարադաղի Վինան, մեռելժամ, Չենկիլեր // մէռլի ժա՞մ, Գավաշի Հարպերտ, (ժամա)հարգ(ը), Նախիջևան, Մեծոփ, ժամախաց, Աշտարակի Տեղեր և այլն:

Տարարմատ հոմանիշներից են՝ *պաշտումահաց*, Արարատյան, *պաշտումահոց* կամ *պաշտում*, Ագուլիս, Հադան, Միլակերտ և Նամագերդ, *խաչօխնա*, Վանի Քոեր, Թիմարի Պողանց, *համփիս*, Կեսարիա // *համպոյս*, Խտրբեկ, *խեր*, Մուշի Հացիկ, *արգ*, Կեսարիա // *հա՞րգ՛*, Գելիեգուզան, *զա՞ր*, Սասուն, *ջաշ*, Սասունի Իշխանածոր, *աբէդ*, Սասունի Հոսներ, *ողորմաճաշ*, Թիֆլիս, *ճաշիտո՛ւն* (=ճաշ ի տուն), Մուշի Մկրագոմ, *թիք՛աւ*, Գորիսի Վերինշեն և Բռուն, *սուֆրա-սեղան*, Վան, *կօվուշ*, Համշեն և այլն:

Վերին Բուլանուխի Փիրանի խոսվածքում *անբիծ՛կ* բառով նշվում է թաղման առաջին օրը տրվող ուտեստը: Թիֆլիսի բարբառում *սուրփի սիղան* են կոչում հանգուցյալի քառասունքի առթիվ տրվող ճաշը:

Սասունի Հոսներից գաղթածներով բնակեցված Թալինի Ներքին Սասնաշենի խոսվածքում *խաչխանա*-ն հանգուցյալի յոթին տրվող հոգեհացի անվանումն է, որին Ջավախքում ասում են *օխթի հաց*, Ջեյթունի բարբառում՝ *հիկկ՞իհոց*, Նիկոմեդիայի Խասկալ գյուղի խոսվածքում՝ *հօքէհաց*, Գավաշի Հարպերտի խոսվածքում՝ *խաչխունա*, քառասունքին տրվող հացը՝ *խըրխաս* և այլն:

Տարարմատ հոմանիշներից տարածական առումով գործուն է ***քելեխ*** բառը (գրանցել ենք 14 հնչատարբերակ):

Ըստ Մ. Քումունցի՝ պարսկերեն «գլուխ, գանգ» բառից առաջացած ***քելեխ*** բառը Սյունիք-Արցախ բարբառային տարածքում նոր

է գործածվում և հավանաբար ներքին փոխառություն է հարևան բարբառներից: Այն իմաստային առումով համապատասխանում է «հոգեհաց, գլխի համար տրված հաց» հասկացությանը¹⁹: Այսպես՝ *քէլէիս*, Երևան, Շուլավեր, Թիֆլիս // *քիլէիս*, Ստեփանավանի Վարդաբլուր, Թումանյանի Թեղուտ // *քէլ'եիս*, Մելիքգյուղ, Հարթավան, Արագած, Ափնա // *քէլեիս*, Կարկառի Ծոկու, Եղեգնաձորի Ենգիջա // *քըլըիս*, Մոտկանի Մրցանք // *քըլեիս*, Նաիրիի Քասաղ, Եղեգնաձորի Աղավնաձոր, Նախիջևանի Շուռուտ // *քըլըիս*, Մարտունու Լիճք, Գորիսի Քարահունջ // *քըլէիս*, Արտաշատ, Մասիս և այլն:

Կարնո բարբառի Ջավախքի խոսվածքում *փեպապի հաց* են անվանում հատկապես գերեզման փորողներին տրվող հոգեբաժինը:

Հանգուցյալի ազգականների ու հարևանների կողմից կատարվող բարեգործությունը Աղձնիքում, Գողթնում, Բորչալուի, Մուշ-Տարոնի, Նոր Բայազետի գավառներում կոչվում էր *սգասեղան*: Այն թաղման երեկոյին հանգուցյալի տուն ուղարկվող ուտեստ (փլավ, եփած հավ, պահոց օրերին՝ լոբի և այլն) և խմիչք էր (գինի, օղի եւ այլն): Բաղեշի տարածքում ազգակից կանայք սգասեղանի համար տարբեր կերակուրներ էին ուղարկում՝ իրենց ամաններով ու գդալներով²⁰: Սասունցիները յոթնօրներին բերած օգնությունը կոչում են *հըվարի* կամ *սըրիսոշի*:

Բարբառային բառապաշարում չնայած քիչ, բայց հանդիպում է մի բառափունջ, որով բնորոշվում է կենդանիների, մասնավորաբար թռչունների հանդեպ կատարվող բարեգործությունը: Ըստ Հ.

¹⁹ Բանավոր հաղորդում:

²⁰ Տե՛ս **Նահապետյան Ռ.**, *Նյույթական փոխօգնության ձևերի մնացուկները աղձնիքահայության ազգակցական խմբերի մեջ XIX դարում և XX դարի սկզբներին*, Երևան, էջ 48:

Թուրշյանի՝ վանեցիները *կալեմաստ* են ասում կալից թռչուններին և անցորդներին տրվող բաժինը²¹:

դ) **Պսակադրության հանդեսին կամ տոնական օրերին կատարվող բարեգործությունների անվանումներ:** Հայ ժողովուրդը առանձնակի հոգատարություն է ցուցաբերում նորակազմ ընտանիքի հանդեպ: Նորապսակներին, ինչպես նաև նրանց հարազատներին նշանդրեք-հարսանիք արարողությունների ընթացքում և եկեղեցական տոներին զանազան նվերներ են բաշխվում, որոնք հայերենի բարբառներում ունեն տարբեր անվանումներ: Այդ բառապաշարը բավականին հարուստ և բազմաբովանդակ է:

Այսպես՝ **անվանական կազմություններ:** *Մեազա* (Ջավախք)՝ «նշանդրեքին օդայի մեջտեղում դրվող սկուտեղ, որին մոտենալու համար օդայի դռան մոտ գլխահակ կանգնած հարսին փեսան պիտի նվեր տա», *երեստեսնէնք* (Նոր Զուղա, Նոր Նախիջևան), *յերեսքացու* (Կարին), *երեստեսանք* (Ջավախք)՝ «տղայի կողմից աղջկան նվերներ տալու արարողությունը», *սաչու* (Ջավախք)՝ «նվեր, որը դրվում է խոնչայի վրա դրված երեք ափսեների մեջ՝ նախատեսված հարսի, քահանայի և հարսն առաջ բերողի համար», *հօպէրէք* (Խոփա, Բորչկա), *հօպէյէք* (Առդըլու), *քերէէք* (Սուրմելե)՝ «հարսանիքին հարսին տնից դուրս բերելիս հորեղբոր տված ընծան», *ծրծագին* (Մեղրի)՝ «փեսայի կողմից հարսի մորը և բարեկամուհիներին տրվող գումար», *դերի* (Ախալքալաք)՝ «նշանադրությունից հետո հարսին տանից դուրս հանելու, զվարճացնելու նվիրատվություն», *խոնչա* (Վարանդա)՝ «Ձատկին, Ջրօրհներքին, Բարեկենդանին, Վարդավառին և Նավասարդին խնամիների՝ միմյանց տարվող ընծաներ», *ախար* (Վարանդա)՝ «Ձատկի խոնչա», *շալակ* (Վարանդա)՝ «քթոցով միրգ ու բանջարեղեն, որը սիրահարված

²¹ Տե՛ս Թուրշյան Հ., *Բառարան Վանի բարբառի*, Երևան, 2018:

երիտասարդը տանում դնում է աղջկա դռանը կամ դրսում քնած տղամարդու գլխավերևում», *տարուբեր* կամ *խրկվածք* (Նոր Նախիջևան)՝ «փեսայի և աղջկա տնից փոխադարձաբար տրվող նվերներ»²², *դուռքոնելա* (Բաղեշ)՝ «հարսի հոր մշակին կնքահոր տված գումարը, որպեսզի վերջինս հարսնւորների առջև փակած դուռը բանա», *փեսապես* (Ջավախք)՝ «աղջկա հարազատների՝ փեսայի տուն նվերներով գնալը»: *Փեսապեսի* հանդիսության ժամանակ հավաքված գումարից տրվում է քահանային և եկեղեցուն:

Ջավախքի բարբառակիրների խոսքը հարուստ է նվերների՝ *դիլայի* և հյուրասիրության համար նախատեսված ուտելիքի բարբառային անվանումներով՝ *լաստիկ արխալուղ*, *թոզլուխ*, *սոնապան*, *չամաշուր*, *կլապիտոններով ելակ*, *քամար*, *յամանի*, *խաս մանուսա*, *սպիտակ չիքիլա յափուղ*, *մի արշին փաթուխա՝ արախճինի համար*, *սպիտակ կլապիտոն*, *մի զույգ մեաս-բապուճ*, *խեծախ*, *շաքարլամա*, *չարագ*, *քաղզբադամ*, *քիշմիշ*, *լապլապու* և այլն²³:

Բառակապակցություններ և նկարագրական արտահայտություններ: *Պզտիկ հարսնցու* (Ջավախք)՝ «առաջին անգամ աղջկա հոր տանը խնամիների հետ ավետման խնջույքի սեղան գցել», *սաչու կանչող* (Ջավախք)՝ «խոնջայի մոտ նստող մարդ, որը նվերը ցույց է տալիս հանդիսականներին և ասում՝ «Ջամիաթ, անկաճ էրէք, շէն կենայ կեսրարը, հինգ մանէթ հարսնցուին»:

Հարադիր բայեր: *Հարսնցու անել* (Ջավախք)՝ «համաձայնության լուրը իմանալուց հետո տղայի տանից երկու երեխա նվերներով ուղարկել աղջկա տուն», *գնալ-գալ* (Ջավախք)՝ «պսակադրության արարողությունների ընթացքին թելով, հացով, օղիով հյուրասիրել»,

²² Օրինակներն՝ ըստ Երվանդ Շահագիզի Նոր-Նախիջևանը և Նոր-Նախիջևանցիք, արտատպուած՝ «Ազգագրական հանդիսից», տպարան Մարտիրոսեանցի, 1903:

²³ Օրինակներն ըստ «Ազգագրական հանդէսի», Թիֆլիս, 1898:

Երզնկայի *խնամդիքի, հալավորթներք, Համշենի ալելուք, Մալաթիայի գախուգ, դողիկ* «Տյառնընդառաջին բաժանվող թխվածք», Ջավախքի *փայ, Ախալքալաքի մաղժաժում* կամ *գաթաթուխ, Նոր Նախիջևանի ջիգա, բուրնու* և բազմաթիվ այլ բարբառաբանություններով նշվում են նորակազմ ընտանիքին օգնելու և ուրախության տարբեր առիթներով բաշխվող ընծաները:

Այսպիսով, բարբառային օրինակների դիտարկումը ցույց է տալիս, որ բարեգործությանը վերաբերող բառապաշարի գերակշիռ մասը պայմանավորված է քրիստոնեական դավանանքով և կրոնաեկեղեցական բնույթ ունի: Գրեթե բացակայում է հանուն պետական կառույցի, հայրենաշինության, արքունիքի, գիտության, ազնվականական և զինվորական դասերի համար կատարվող բարեգործությունը հատկանշող բառաշերտը: Դա բացատրվում է բարբառակիրների կրոնական հավատալիքներով ու նախապաշարումներով:

НАЗВАНИЯ ПОНЯТИЯ «БЛАГОТВОРИТЕЛЬНОСТЬ» В ТЕРРИТОРИАЛЬНЫХ ВАРИАНТАХ АРМЯНСКОГО ЯЗЫКА

МЕСРОПЯН А.

Резюме

Ключевые слова: армянский, территориальный вариант, диалект, благотворительность, дань.

Лексика, описывающая понятие «благотворительность», в армянских диалектах богата. **Собранные диалектизмы** распределены по нескольким (смысловым, тематическим) группам: 1) благотворительность, основанная на религиозных убеждениях или пред-

рассудках; 2) церковная дань; 3) общественная благотворительность; 4) благотворительность для молодоженов и разные праздники.

Исследование показывает, что большое количество диалектов описывает благотворительные пожертвования для Армянской церкви. Это монастырские подношения, которые имеют разные названия в региональных версиях армянского языка.

THE NAMES OF THE CONCEPT OF «CHARITY» IN THE REGIONAL VERSIONS OF THE ARMENIAN LANGUAGE

MESROPYSN H.

Summary

Keywords: Armenian, territorial variant, dialect, charity, tribute.

The vocabulary describing the concept of charity is rich in Armenian dialects.

The collected dialectisms have been divided into several (thematic) groups: 1) charity based on religious beliefs and prejudices; 2) church tribute; 3) public charity; 4) charity for newlyweds and various holidays.

The study shows that a large number of dialects describes charitable donations for the Armenian Church. These are monastic donations that have different names in the regional versions of the Armenian language.